



ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ
 ՆԱԽԱԳԱՀ ԼԵԻՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵՐԳՄԱՆ
 ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

(11 նոյեմբեր 1996)

Փառք և գոհութիւն կ'ընծայեմ առ Աստուած, առ Հայրն մեր Երկնաւոր, որ շնորհ ըրաւ իմ անձիս ձեզ հետ միասին ապրելու այս պատմաշէն պահը և մատուցելու Աստուծոյ օրհնութիւնը մեր ազգի քրիստոնէական ծննդավայր և մեր Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի « անյոելի պանգակատուն» ին ղօղանջներով, երբ այսպէս մեր ապատ ու անկախ Հանրապետութեան վերջնտրեալ նախագահը՝ Նորին Վսեմութիւն Լևոն Տէր-Պետրոսեան, կը կատարէ իր հանդիսաւոր երդումը հաւատարիմ մնալու քրիստոնէական կնիքով դիմագծուած և ինքնուրոյնացած մեր Հայրենիքին և անոր անկախ Հանրապետութեան ժողովրդահաստատ Սահմանադրութեան:

Այս երկրորդ անգամն է, սիրելի պրն. Նախագահ, որ Դուք կը ներկայանաք ձեր պաշտելի ժողովրդին և «յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց և յամենայն գօրութեանէ քումմէ» (ՄԱՐԿ. ԺԲ. 30) կը կատարէք Ձեր երդումը, որուն երջանիկ վկաներն ենք մենք բոլորս այստեղ և մեր հայրնիքի չորս ծագերուն:

Երբ առաջին անգամ այս երդումը կատարեցիք, այստեղ էր կանգնած մեր երջանկալիշատակ նախորդը՝ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ իր օրհնութեան խօսքին մէջ Ձեր ճանա-

պարհը բնորոշեց Գողգոթա բառով: Պատուով շալկեցիք ազգին խաչը անցնող հինգ տարիներու ընթացքին: Երբ Մենք ընտրուեցանք Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ ինքնապոհողութեան նոյն պագումներով Դուք ըսիք, ակնարկելով նաև իմ ստանձնած Գողգոթագնաց խաչակրութեան՝ «պիտի մեր գլուխը մատող անեմք այս ժողովրդին»:

Այո՛, առանց պոհողութեան չկայ մեծ իրագործում: Սա Քրիստոսաւանդ ամենապարզ և միանգամայն ու մարդկայնօրէն ամենադժուար իրագործելի ճշմարտութիւն է: Այդ կարելի է միայն այն ատեն, երբ պոհողութիւն ստանձնող անձին մէջ կան Աստուծոյ սէրը, որ ժողովուրդի սիրոյն մէջէն կ'արտայայտուի, Հայրենիքին նախանձախնդրութիւնը և յարութեան տեսիլքը, որ ազգին վերակենդանութեան ու յաղթանակին կը հայի արևածաղիկի նման:

Այս հանդիսաւոր պահուն երբ մեր աղօթքը կը մատուցենք Ձեր առողջութեան, Ձեր հոգեկան պօրացման և բարձրագոյն պաշտօնի յաջողութեան համար, կոչ կ'ընենք ձեր բոլոր գործակիցներուն և մեր ամբողջ հայ ժողովուրդին ի Մայր Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի, պօրավիզ կանգնելու Ձեզ Ձեր ամենադժուարին առաքելութեան յառաջագնաց ճամբուն վրայ:

Պատմութիւնն է, որ մեզ կը դիտէ այս պահուն: Անցնող հինգ տարիները եղան կերպարանափոխութեան տարիներ: Ըինք գերի՛ դարձանք ազատ: Ըինք ենթակայ՛ դարձանք անկախ, տէր ու տիրական: Ըինք կաշկանդեալ՛ դարձանք ինքնիշխան և ահա հասանք Աւետեաց Երկրի գոյավիճակին: Անշուշտ կաթ ու մեղր չէ մեր երկիրը և ոչ ալ վարդ ու բուրմունք: Մեր ժողովուրդը կարիքն ունի իր կեանքի պայմաններուն բարելւման, իր մարդկային կարիքներուն արժանի գոհացման: Դուք ձեր հինգ տարիներու փորձառութեան պօրութեամբը գօտեպնդուած՝ յառաջդիմութեան ճանապարհով պիտի առաջնորդէք մեր հայրենիքն ու ժողովուրդը: Ինչպէս բանաստեղծը ըսեր է՝ «Մեմք եմք մեր սարբըր», այսօր ես ալ կ'ըսեմ ձեզի՛ «Մե՛նք եմք մեր հայրենիքը, մե՛նք եմք մեր պետութիւնը, մե՛նք եմք մեր Եկեղեցին»: Այդ «Մեն՝Բ»ը կը նշանակէ՛ միասնութիւն, համայնութիւն, ամբողջականութիւն: Կը յիշեցնեմ ձեզի մեր պայծառամիտ պատրիարքներէն մէկուն խորհմաստ խօսքը. «Միարանութեամբ փոքրերը կը մեծնան. անմիարանութեամբ մեծերը կը փոքրանան» (Յ. Նալեան): Այդ նշանաբանի յարացոյց հրամայականին տակ Ե անոր գաղափարին ու պագումին կշռոյթովը քալենք գալիք տարիներու ընթացքին, միասնական

կեցուածքով, ընդհանրական շահերու հետապնդման իմաստուն և քաջարի վճռակամութեամբ և համախոսութեամբ ու համակարգեալ աշխատանքով:

Եւ ահա ա՛յս պատգումներով և մտածումներով այժմ պիտի արտասանենք օրհնութեան աղօթքը մեր հայրերու ոսկեղէնիկ բարբառով, որ այնքան մօտ է մեր Նախագահի սրտին.

«Պահպանիչ և յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ և օրհնեա՛ զվերընտրեալ Նախագահն մեր, և զհայրենի աշխարհն զՀայաստան, և զՀանրապետութիւնն սորա և առաջնորդեա զսա «ի վայրի դաւարւո՞ջ և առ ջուրս Հանգստեան» ի խաղաղութեան, յապահովութեան և յընթացս բարգաւաճութեան, ի վայելումն համայն ժողովրդեանս մեր հայկազնեան ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիդ քո ի խաղաղութեան: Փրկեա՛, Տէր, յերևելի և յաներևոյք թշնամւոյն, արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից. Ամէն» :

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

